



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Թ Ի Վ 1

**ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝
2019 Թ. ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 12-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ**

Օրակարգում՝

1. Ամբիոնների ծանրաբեռնվածությունների հաստատում:
2. Ուսումնական տարվա սկզբի հետ կապված խնդիրների քննարկում:
3. ԵՊՀ 100-ամյակի տոնակատարության միջոցառումների ընթացքը ֆակուլտետում:
4. Ռեկտորատից ստացված գրությունների և դրանց պատասխանների իրազեկում:
5. Հայ գրականության ամբիոնի տարեկան հաշվետվությունը:
6. Ֆակուլտետում իրականացվող Գիտության պետական կոմիտեի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորվող աշխատանքների» հաշվետվության քննարկում:
7. Ընթացիկ հարցեր:

Սկսելով գիտխորհրդի նիստը՝ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանն իր խոսքի սկզբում նախ՝ շնորհավորեց ներկաներին ուսումնական նոր տարվա առիթով, ցանկացավ քաջառողջություն, գիտամանկավարժական բեղուն գործունեություն,

ապա՝ տեղեկացրեց, որ ֆակուլտետի գիտական խորհրդի 35 անդամներից նիստին մասնակցում է 28-ը, և ապահովված է անհրաժեշտ քվորումը: Նա այնուհետև ծանոթացրեց օրակարգի հարցերին, որոնց քննարկումը միաձայն ընդունվեց բաց քվեարկությամբ:

1-ին հարցի առիթով պրոֆ. Ա. Ավագյանը ձայնը տվեց ամբիոնների վարիչներին: Վերջիններս իրենց ծոսքում նշեցին, որ թեև առկա են բավական դժվարություններ, այնուամենայնիվ կարողացել են գտնել, ճիշտ է, ոչ բոլորի համար ընդունելի, հնարավոր լուծումներ:

Օրակարգի **2-րդ հարցը** նվիրված էր ուսումնական տարվա սկզբի հետ կապված խնդիրներին: Դեկանի տեղակալ բ. գ. թ., դոցենտ Արտաշես Մարգարյանը մասնավորապես նկատեց, որ դեկանատը ֆակուլտետի դեկանատը ուսումնական տարվան նախապատրաստվել է անհրաժեշտ ջանադրությամբ, և ամեն ինչ արդեն կարգավորվել և հունի մեջ է ընկել:

Պրոֆ. Ա. Ավագյանն իր կողմից հավելեց, որ պատշաճ դիմավորվել են առաջինկուրսեցիները, ամենայն բարեխղճությամբ կազմվել ու փակցվել են դասացուցակները: Նա բոլոր ամբիոնների վարիչներին տեղեկացրեց, որ ուսումնական նոր տարին սկսվել է բնական հունով, և նրանցից ու դեկանատից պահանջեց ուսումնական գործընթացի նկատմամբ դրսևորել բարձր պատասխանատվություն և ջանադիր աշխատանք:

Օրակարգի **3-րդ հարցի՝** ֆակուլտետում ԵՊՀ 100-ամյակի տոնակատարության միջոցառումների ընթացքի մասին հնչեցին զանազան կարծիքներ, որոնց միավորում էր ընդհանուր մեկ նպատակ, այն է՝ արժանավայել ու լավագույնս նշել հոբելյանակա տարելիցը:

Օրակարգի **4-րդ հարցում** պրոֆ. Ա. Ավագյանը մանրամասն ներկայացրեց ռեկտորատից ստացված բոլոր գրություններն ու դրանց բովանդակությունն իրազեկեց գիտական խորհրդի անդամներին:

Օրակարգի **5-րդ հարցը** նվիրված էր հայ գրականության ամբիոնի տարեկան հաշվետվությանը: Իր ելույթում ամբիոնի վարիչ պրոֆ. Ս. Մուրադյանը մասնավորապես ասաց հետևյալը.

Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնը համալսարանի մյուս ամբիոնների նման հայտնվել է աննախանձելի վիճակում: Ուսանողների նվազելու, հոսքերի կրճատվելու և մագիստրատուրայի առանձին խումբ չձևավորվելու հետևանքով միայն երեք պրոֆեսոր ունեն ամբողջական դրույք, հինգ դոցենտները՝ կես

դրույք, իսկ համատեղությամբ աշխատող Հ. Համբարձումյանը՝ քառորդ դրույք ծանրաբեռնվածություն: Նման պայմաններում հնարավոր էլ չէ նրանցից պահանջել ոգևորություն, գործին անմնացորդ նվիրվածություն և գիտահետազոտական լիարժեք աշխատանք: Սակայն, ի պատիվ ամբիոնի աշխատակիցների, պետք է շեշտել, որ նրանք այս պայմաններում անգամ պատվով են կատարում համալսարանականի իրենց պարտականությունները և մանկավարժական, գիտական ու հասարակական գործունեության մեջ էլ չեն թերանում:

ԵՊՀ-ի հիմնադրման 100-ամյակի, Թումանյանի, Կոմիտասի, Օտյանի, Շանթի 150-ամյակների հոբելյանական տարում նրանք աշխատում են գերծանրաբեռնված. եռանդով մասնակցում են համալսարանի և հանրապետության գիտամշակութային կյանքին, մեկնում գործուղումների և արտերկրում էլ հանդես են գալիս գիտական զեկուցումներով ու հրապարակային բանախոսություններով: Նրանք ԵՊՀ մինչհամալսարանական կրթության բաժնի ծրագրով, ըստ վիճակագրության, մայրաքաղաքի և հանրապետության մարզերի դպրոցներում՝ Աբովյանում, Սիսիանում, Գորիսում, Գյումրիում, Արտաշատում և այլուր եղել են ավելի շատ, քան մայր բուհի մյուս դասախոսները միասին վերցրած:

Սկսենք ամբիոնի վարիչից: Արդեն մի քանի տարի նա հետևողականորեն աշխատում է հայ նոր գրականության պատմության բուհական դասագրքի ստեղծման ուղղությամբ: Նախատեսված է երեք հատորում ընդգրկել ամբողջ նոր գրականության պատմությունը: Ավարտվել է և շուտով քննարկման կներկայացնի շուրջ 500 էջ կազմող Ա գիրքը, որն ընդգրկում է նախաաբովյանական շրջանից մինչև 19-րդ դ. 70-ական թթ., այսինքն՝ հետևյալ հիմնական հեղինակները՝ Աբովյան, Ալիշան, Նալբանդյան, Պեշիկթաշլյան, Պատկանյան, Շահազիզ, Դուրյան: Մինչև Վահան Տերյանը ներառյալ մյուս հեղինակները կընդգրկվեն երկու հատորում: Ավելորդ չէ ասել, որ դասագիրքն ստեղծվել է գրականագիտության արդի նվաճումների հիման վրա, մեր ժամանակների թելադրած՝ արժեքների վերագնահատման պահանջներով, նոր հայացքով ու մոտեցմամբ:

Որպես խմբագրական խորհրդի անդամ՝ նա մասնակցել է Հովհ. Թումանյանի և Ավ. Իսահակյանի երկերի լիակատար ժողովածուների ակադեմիական հրատարակության աշխատանքներին, ընդ որում արդեն լույս են տեսել Թումանյանի 3 հատորները և Իսահակյանի 6-րդ հատորը: Կազմել, խմբագրել, ծանոթագրել և իր ընդարձակ առաջաբաններով

հրատարակել է Հովհ. Շիրազի «Հուշարձան հայրիկիս» և «Անտիպ էջեր», գիրք Ա գրքերը, Բ. գիրքը լույս կտեսնի մենչև հոկտեմբեր: «Չարենցյան ընթերցումներ» 10-րդ պրակում տպագրել է «Ինքնակերպավորված Ե. Չարենցը «Երկիր Նաիրի» վեպում և Կարսի անկումը նրա հայացքով» ուսումնասիրությունը:

Արամ կաթողիկոսի հրավերով դասախոսությունների շարքով նա հանդես է եկել Լիբանանում՝ Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոսարանի՝ Անթիլիասում կազմակերպած հայագիտական դասընթացներում, Թումանյանի 150-ամյակի առթիվ զեկուցում է կարդացել ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում և շուրջ 400 ամերիկահայերի ներկայությամբ հրապարակային բանախոսություն՝ ԱՄՆ-ում՝ Բըրբանքի Սբ. Ղևոնդյաց եկեղեցու Գալայջյան սրահում, որի համար արժանացել է Գլենդելի քաղաքապետարանի պատվոգրին:

Որպես խմբագրական հանձնաժողովի անդամ՝ նա մասնակցել է արդեն լույս տեսած 750 մեծադիր էջ կազմող և շուրջ 900 ԵՊՀ դասախոսների ու աշխատակիցների կենսագրություն պարունակող «Կենսագրական հանրագիտարանի» խմբագրման աշխատանքներին:

- Մասնակցում է ՀՀ ԳԱԱ գրականության իսստիտուտի, Խ. Աբովյանի, Հովհ. Թումանյանի, Հովհ. Շիրազի տուն-թանգարանների գիտական խորհուրդների աշխատանքներին: Այս ամենի հետ միասին «Գուրգեն Մելիքյանի՝ Քաշաթաղի բազմազավակ ընտանիքների հիմնադրամի» հոգաբարձության խորհրդի անդամ է, կարելի է ասել՝ գրեթե միայնակ ստեղծում է նրա «Բարեգործ» պաշտոնաթերթը, որից արդեն տպագրվել է 44 համար: Որպես ժյուրիի անդամ՝ 8 անգամ մասնակցել է Շուշիում անցկացվող Համահայկական ասմունքի մրցույթ – փառատոնին և 11 անգամ՝ ՀՀ Ազգային ժողովի կազմակերպած փառատոն-մրցույթին:

Պրոֆ. Վ. Սաֆարյանը՝ ֆակուլտետի մեթոդխորհրդի նախագահը, առանձին գրքով հրատարակել է «Գրականության պատմության դրվագներ» խորագրով հոդվածների ժողովածուն և պատրաստվում է 150-ամյա հոբելյաններին:

Հաշվետու տարում առանձնակի ոգևորությամբ է աշխատել պրոֆ. Ալ. Մակարյանը՝ հրատարակելով «Նորից Պարոնյանի հետ» արժեքավոր մենագրությունը և գիտական մամուլում տարբեր հեղինակների նվիրված ութ ծավալուն հոդվածներ (այդ թվում արտերկ-

րում՝ անգլերենով), ինչպես նաև Զապել Եսայանի «Միլիտարի պարտեզները» երկի բավական ընդարձակ վերջաբանը (43 տպագիր էջ):

Բավական արդյունավետ է դոց. Հ. Համբարձումյանի աշխատանքը՝ տպագրված մի լուրջ մենագրություն՝ «Սասնա ծռեր. պատում, մոտիվ, գրքային ավանդույթ» խորագրով, նաև 4 հոդված, տարբեր թեմաներով 5 զեկուցում է կարդացել միջազգային և հանրապետական գիտաժողովներում (մեկը՝ ՌԴ Ուֆայում):

Դոց. Ռ. Էլոյանը Եր. Օսյանի մասին «Արցունքոտ ծիծաղի մեծ վարպետը» մենագրության երկրորդ գիրքն է պատրաստում և 150-ամյակին նվիրված զեկուցում, բ.գ.դ., դոց Ս. Մխիթարյանը տպագրել է 3 հոդված և 2-ը հանձնել հանձնել հրատարակման:

Դոց Վ. Ավագյանը պարզապես հրաշալի էր կազմակերպել Հ. Թումանյանի 150-ամյակին նվիրված գիտաժողովը ԵՊՀ Իջևանի մասնաճյուղում, որտեղ կարդաց գիտական զեկուցում, հրատարակել է նաև 3 հոդված:

4 հոդված հրատարակել և գիտաժողովներում 4 զեկուցում է կարդացել դոց. Ն. Վարդանյանը. 2019 թ. մայիսից նա Լիլիթ Սեյրանյանի և Ալվարո Մեմիրջյանի հետ միասին նախաձեռնել է ֆակուլտետում գործող «Բանասիրական ընթերցումներ» ակումբը, որի սեմինար-քննարկումները տեղի են ունենում երկու շաբաթը մեկ՝ ուրբաթ օրերին:

ԵՊՀ «Հայագիտության հարցեր» հանդեսում մեկական հոդված են տպագրել դոց.դոց. Ս. Սրապիոնյանն ու Վ. Եղիազարյանը: Ս. Սրապիոնյանը զեկուցումով հանդես է եկել «Արարատ» ամսագրի 100-ամյակին նվիրված գիտաժողովում. Նյութը տպագրվել է «Էջմիածին» հանդեսի հոբելյանական համարում:

Եռանդով աշխատել են նաև ասպիրանտ - հայցորդները: Ունենք մեկ երկրորդ տարվա առկա ասպիրանտ՝ Աստղիկ Սողոյանը: Մասնագիտականից բացի՝ նա հանձնել է բոլոր քննությունները, տպագրել 3 հոդված և շարադրել թեկնածուական ատենախոսության մոտ կեսը: Ունենք 6 հացորդ, որոնց ղեկավարում են ամբիոնի պրոֆեսորները:

Հայցորդ Տաթևիկ Մերջանյանը տպագրել է պաշտպանության համար անհրաժեշտ քանակությամբ 7 հոդված, ընդհանուր՝ 10, հանձնել է բոլոր քննությունները, ավարտել և ամբիոնի քննարկանն է ներկայացրել Նար-Դոսին նվիրված թեկնածուական ատենախոսությունը:

Հայցորդ Աննա Թորոսյանը ապրիլին Միչիգանի համալսարանում, ապա և Վանաձորում կազմակերպված միջազգային գիտաժողովներում հանդես է եկել Ղազարոս Աղայանի մասին զեկուցումներով, թեկնածուական ատենախոսության վերաբերյալ տպագրել 4 և հրատարակման է հանձնել 5-րդ հոդվածը, կատարել աշխատանքի զգալի մասը:

Լևոն Բաշայանի մասին թեկնածուական ատենախոսությունն ավարտին է մոտեցրել հայցորդ Թամարա Անդրեասյանը՝ Գորիսից: Տպագրել է 6 հոդված և հանձնել բոլոր քննությունները:

Ամբիոնը մասնակցել է գրականության ինստիտուտում Լ. Շանթի նվիրված գիտաժողովին և պատրաստվում է առաջիկայում Թումանյանին և Օտյանին նվիրվելիք գիտաժողովներին:

Այս է հաշվերտու շրջանում ամբիոնում կատարված աշխատանքների պատկերը՝ ընդհանուր առմամբ՝ 8 գիրք, 51 հոդված, 15 գիտական զեկուցում:

Օրակարգի վերջին հարցի առիթով ելույթ ունեցան պրոֆ., պրոֆ. Յու. Ավետիսյանը և Ա. Աբաջյանը: Նրանք ֆակուլտետում իրականացվող Գիտության պետական կոմիտեի «Գիտական և գիտատեխնիկական գործունեության պայմանագրային (թեմատիկ) ֆինանսավորվող աշխատանքների» իրենց հաշվետվություններում ներկայացրին խմբերի կատարած առկա ու գալիք աշխատանքները:

ԸՆԹԱՑԻԿ ՀԱՐՑԵՐՈՒՄ

Լ Ս Ե Ց Ի Ն - Հայ բանասիրության ֆակուլտետի «Հայոց լեզու և գրականություն» բաժնի առկա ուսուցման բակալավրիատի հետևյալ ուսանողներին՝ Եղիազարյան Սամվել Վարդանի, Միրզոյան Արթուր Սահակի, Մկրյան Աշոտ Մկրտչի, Բարսեղյան Վարդուհի Արտաշեսի կրթաթոշակ տրամադրելու հարցը:

Ա Ր Տ Ա Հ Ա Յ Տ Վ Ե Ց Ի Ն – Պրոֆ., պրոֆ. Ա. Ա. Ավագյանը, Ալ. Մակարյանը, Վ. Սաֆարյանը, Յու. Ավետիսյանը և այլք:

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն - Տրամադրել ներքոհիշյալ ուսանողներին կրթաթոշակ՝

• Եղիազարյան Սամվել Վարդանի՝ «Գրիգոր Նարեկացու անվան» - հայ բանասիրության ֆակ., 4-րդ կուրս

- Բարսեղյան Վարդուհի Արտաշեսի՝ «Ստեփան Ալաջաջյանի անվան» - հայ բանասիրության ֆակ., հ.լ. 3-րդ կուրս

- Մկրյան Աշոտ Մկրտչի՝ «ԵՊՀ-ի անվան» կրթաթոշակ - հայ բանասիրության ֆակ., 3-րդ կուրս

- Միրզոյան Արթուր Սահակի՝ «Մեսրոպ Մաշտոցի անվան» - հայ բանասիրության ֆակ., 4-րդ կուրս

ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ

ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ

ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ

ՊՐՈՖ. ԱԼ. ՄԱԿԱՐՅԱՆ